ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# Ա Ր Ա Ր Ա Տ Ի   Մ Ա Ր Զ Պ Ե Տ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 3Ու Ա

ք.Արտաշատ

„09„ հոկտեմբերի 2024թ.

«ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԶՈՐԱԿԻ ՄՈՆԹԵ ՄԵԼՔՈՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԱՐՄԻՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 220-րդ հոդվածով, 223-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի բ) ենթակետով, հիմք ընդունելով «ՀՀ Արարատի մարզի Զորակի Մոնթե Մելքոնյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Արմինե Ավետիսյանի 24.09.2024 թ. ներկայացրած բացատրագիրը.

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի դեկտեմբերի 7-ի՝ «Հանրակրթական ուսումնական հաստատությունների՝ պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորման գործակիցներն ու նորմատիվները հաստատելու մասին» N 79-Ն հրամանի հավելվածի 3-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանված պահանջի խախտման՝ օրենսդրությամբ սահմնաված ժամկետում անհրաժեշտ տվյալները Կրթության կառավարման տեղեկատվական համակարգ չմուտքագրելու համար, «ՀՀ Արարատի մարզի Զորակի Մոնթե Մելքոնյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Արմինե Ավետիսյանի նկատմամբ կիրառել «նկատողություն» կարգապահական տույժը:

Восстановимая подпись

X

ՍԵԴՐԱԿ ԹԵՎՈՆՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: TEVONYAN SEDRAK 2602900826 Ս. ԹԵՎՈՆՅԱՆ